



«ՀԵՏԱՔՆՆՈՂ ԼՐԱԳՐՈՂՆԵՐ» հասարակական կազմակերպություն

Երևան, Փ. Բուզանդի 1/3, 8-րդ հարկ, հեռ: (37410) 580219, 563363, ֆաքս: (37410) 581102, E-mail: [info@hetq.am](mailto:info@hetq.am), [hetq@hetq.am](mailto:hetq@hetq.am), URL : [www.hetq.am](http://www.hetq.am)

06.09.2021թ.

ՀՀ Արմավիրի մարզպետ  
Պարոն Համբարձում Մաթևոսյանին

«Հետաքննող լրագրողներ» ՀԿ-ի  
«Հետք» թերթի լրագրող  
Գրիշա Բալասանյանից  
Հեռ. 093-82-26-80, e-mail: [grisha.balasanjan@hetq.am](mailto:grisha.balasanjan@hetq.am)

Հարգելի պարոն Մաթևոսյան,

«Հետք» էլեկտրոնային թերթը հոդված է պատրաստում: «Տեղեկատվության ազատության մասին» ՀՀ օրենքի 6, 9, 12-րդ հոդվածների հիմքով խնդրում եմ տրամադրել տեղեկությունների հետևյալի մասին.

1. 2018-2021թթ. (հարցմանը պատասխանելու օրվա դրությամբ) Արմավիրի մարզում քանի՞ օտարերկրյա (այդ թվում՝ հայաստանյան ընկերությունների կամ ՀՀ քաղաքացի ֆիզիկական անձանց հետ համատեղ) ներդրում է իրականացվել գյուղատնտեսության ոլորտում:
2. Սույն հարցման 1-ին կետում նշված անձինք ինչ ներդրումներ են իրականացրել, ինչ գումարի չափով և որ համայնքներում: ***Տեղեկատվությունը տրամադրել ըստ տարիների՝ 2018-2021թթ., ընկերությունների (ֆիզիկական անձանց) տվյալների, ներդրման տեսակի, գումարի չափի և համայնքի:***
3. Սույն հարցման 1-ին կետում նշված անձինք մարզի ո՞ր համայնքներում են հողամասեր գնել, ինչ չափի և ինչ նպատակով: ***Տեղեկատվությունը տրամադրել, ըստ ընկերությունների (ֆիզիկական անձանց), համայնքի, հողի չափի և նպատակի:***
4. 2018-2021թթ. վերը նշված սուբյեկտներն ի՞նչ եղանակով են ձեռք բերել հողատարածքները և ինչ գնով: ***Տեղեկատվությունը տրամադրել, ըստ տարիների, ընկերությունների (ֆիզիկական անձանց), համայնքի, հողի չափի, գնի, ձեռքբերման եղանակի:***
5. Արդյո՞ք ձեռք բերված հողատարածքները վերը նշված սուբյեկտներն օգտագործում են ըստ նշանակության: Եթե ոչ, ապա որ ընկերությունների մոտ է հայտնաբերվել շեղումներ և ինչ քայլեր են ձեռնարկվել:
6. Վերը նշված սուբյեկտները, եթե օգտագործում են խոշոր հողակտորներ, մշակության դեպքում ջրային ի՞նչ աղբյուրներից են օգտվում: Արդյո՞ք այս տարի սուր արտահայտված ջրի պակասը նաև նրանց կողմից ջրի օգտագործած հետևանքը չէ:

**Կանխավ շնորհակալություն**

**Դիմող՝ Գ. Բալասանյան**

